ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ-ի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Նոր Նորքի և Ավանի տարածքային կենտրոնը (այսուհետ՝ տարածքային կենտրոն) համագործակցության է հրավիրում մարզում (Երևան քաղաքում), ՀՀ կառավարության 2015թ-ի հունիսի 4-ի թիվ 582-Ն որոշման 5-րդ կետով հաստատված իր սպասարկման տարածքում (այսուհետ՝Տարածաշրջան) գործող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց, որոնք, միանալով սոցիալական համագործակցության համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր), հայտնում են իրենց համաձայնությունը հետևյալի մասին՝

- գործել Համաձայնագրի նպատակներին և սոցիալական աջակցության սկզբունքներին համապատասխան;
- գործադրել լավագույն ջանքերը Համաձայնագրում և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) ամրագրված դրույթներն իրագործելու համար։

Համաձայնագրին միանալու մասին սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների պաշտոնական գրությունները, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմումները, ներկայացվում են Միասնական սոցիալական ծառայության Նոր Նորքի և Ավանի տարածքային կենտրոն (հասցե՝ ք. Երևան, Խուդյակով 222), որում նշվում է Համաձայնագրին ամբողջությամբ կամ վերապահումով միանալու մասին:

Տարածքային կենտրոնը Կազմակերպությունների (ֆիզ ան ձ ան ց գրությունները) դիմումները ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրանց պատճենները ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ Համաձայնագրին միացած մարմինների և անձանց տվյալները պաշտոնական համացանցային կայքում տեղադրելու նպատակով:

Համաձայնագրին միանալ ցանկացող Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկությունը

- մարմնի կամ կազմակերպության դեպքում՝

ա. անվանումը,

բ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման օրը, ամիսը, տարին, գրանցման համարը (բացառությամբ՝ մարմինների),

գ. փաստացի գործունեության հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, կայքի անվանումը (առկայության դեպքում),
դ. ներկայացուցչի ազգանունը, անունը,
ե. իրականացված(վող) ծրագրերը.

- ֆիզիկական անձանց դեպքում՝

ա. ազգանունը, անունը,
բ. հաշվառման հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը,
գ. գործունեության նախընտրելի ոլորտը,
դ. կամավորական աշխատանքի տևողությունը (առկայության դեպքում):

Տարածքային կենտրոնը Համաձայնագրին միանալու ցանկություն հայտնած կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին, նրանց տվյալները համապատասխան պաշտոնական կայքում տեղադրվելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է այդ մասին և տրամադրում Համաձայնագրի մեկ օրինակ՝ վավերացված տարածքային կենտրոնի ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր էջը կնքված տարածքային կենտրոնի կնիքով:
Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագիրը ներկայացվում է սույն հայտարարությանը կից՝ համաձայն Հավելված 1-ի:

Համաձայնագրին միանալու օր է համարվում տարածքային կենտրոն այդ մասին գրությունը (դիմումը) ներկայացնելու օրը: Յուրաքանչյուր կողմ Համաձայնագրից մասնակցությունը հետ կանչելու պաշտոնական գրությունը (դիմումը) ներկայացնում է տարածքային կենտրոն: Կողմի մասնակցությունը Համաձայնագրին համարվում է դադարած Կողմի՝ մասնակցությունը հետ կանչելու մասին գրությունը (դիմումը) տարածքային կենտրոն ներկայացնելու պահից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
Միասնական սոցիալական ծառայության Նոր Նորքի և Ավանի
տարածքային կենտրոն